ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

- Մենք հետևողական ենք հակածխախոտային քաղաքականությանը: Ուիգմոր հիվանդանոցի շենքում և շրջակայքում արգելվում է ծխախոտ կամ էլեկտրոնային ծխախոտ օգտագործել:

- Հիվանդանոցի ամբողջ տարածքում գործում է անվճար Wi-Fi կապ, որից կարող են օգտվել ինչպես բուժառուները, այնպես էլ այցելուները:

FREE WI Fi

- Հիվանդանոցի շենքին կից գործում է վերգետնյա մեծ ավտոկայանատեղի:

P



«Ուիգմոր կանանց և երեխաների հիվանդանոց»
Հ. Ներսիսյան 10/7, Երևան 0014,
+374 12345678

«Ուիգմոր ընտանիքի առողջության կենտրոն»
Պուշկին 56, Երևան 0002, Հայաստան
+374 12345677

www.wigmore.am

ԻՆՉՊԵՍ ՊԱՏՐԱՍՏՎԵԼ ՎԻՐԱՀԱՏՈՒԹՅԱՆ

ՆԱԽԱՎԻՐԱՀԱՏԱԿԱՆ ՀՈՒՇԱԹԵՐԹԻԿ

WIGMORE

ԻՆՉՊԵ՞Ս Է ՊԼԱՆԱՎՈՐՎՈՒՄ ՎԻՐԱՀԱՏՈՒԹՅՈՒՆԸ

- Բժիշկի կողմից խորհրդատվության իրականացումից և վիրահատության ցուցումից հետո կատարվում է վիրահատության հերթագրում:
- Վիրահատության պլանավորված օրից երկու օր շուտ իրականացվում են նախավիրահատական հետազոտություններ, որոնց ծավալը կախված է վիրահատության տեսակից:
- Հետազոտության պատասխանների պատրաստ լինելուն պես բուժառուին զննում է անեսթեզիոլոգը (ցավազրկում/անեսթեզիա իրականացնող բժիշկը):
- Անեսթեզիոլոգին փոխանցեք երեխայի առողջությանն առնչվող բոլոր մանրամասները՝ նախկին հոսպիտալացումներ, վիրահատություններ, դեղորայքային կամ սննդային ալերգիա, բժշկական եզրակացություններ, հետազոտությունների արդյունքներ, նաև տեղեկացրեք ընդունող դեղամիջոցների մասին, որպեսզի ստանաք ցուցումներ դեղերի հետագա ընդունումը շարունակելու կամ ժամանակավորապես դադարեցնելու վերաբերյալ:
- Հակացուցումների բացակայության դեպքում վիրահատության օրը հաստատվում է:

ԻՆՉՊԵ՞Ս ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎԵԼ ՎԻՐԱՀԱՏՈՒԹՅԱՆ

Հիվանդանոց բերելու պայուսակը նախապատրաստեք նախորդ օրը:

Չմոռանաք Ձեզ հետ վերցնել՝

- երեխայի բամբակե գիշերահագուստը և նրա սիրելի խաղալիքը,
- երեխայի փաստաթղթերը՝ ծննդյան վկայական, և ծնողի անձնագիրը,
- վերջերս իրականացրած հետազոտությունների տվյալները (սոնոգրաֆիա, ռենտգեն, համակարգչային շերտագրություն, ՄՌՏ),
- եթե երեխան որևէ խնդրի հետ կապված մշտական դեղորայք է ընդունում, ապա նշված դեղորայքը:

Չի՛ կարելի

- Վիրահատության ներկայանալ շպարով և/կամ զարդերով:
- Լաքապատել երեխայի/բուժառուի եղունգները. լաքը կխանգարի թթվածնի հագեցվածությունը որոշող սարքի աշխատանքին (պուլսօքսիմետր):

ԱՆՁՆԱԿԱՆ ՀԻԳԻԵՆԱ

- Հիվանդանոց գալուց առաջ պարտադիր լողացրեք երեխային:
- Վիրաբույժի կողմից համապատասխան ցուցման դեպքում էլեկտրական սափրիչով հեռացրեք վիրահատական դաշտի մազածածկույթը *(ածելիի կիրառությունը խստիվ արգելվում է)*: Մազի առկայությունը վիրահատական դաշտում կարող է նպաստել վիրահատական վերքի ինֆեկցմանը:

ՍՆՆԴԱԿԱՐԳ

- Երեխայի տարիքից և վիրահատության առանձնահատկությունից կախված՝ բժիշկ անեսթեզիոլոգը կբացատրի, թե որ ժամից սկսած երեխային չի կարելի սնունդ և հեղուկներ տալ: Խոսքը նաև պարզ սնունդի կամ ջրի, կոնֆետի, մաստակի մասին է: Անվերապահորեն հետևեք այս խորհրդին. նշանակված ժամից դուրս սնունդ կամ հեղուկ ընդունելու դեպքում վիրահատությունը կարող է չեղարկվել:
- Այս մասին տեղեկացրեք նաև ընտանիքի մյուս մեծահասակներին. չիմանալու դեպքում նրանք կարող են երեխային կերակրել կամ խմելու որևէ հեղուկ առաջարկել:

ՆԱԽԱՊԵՍ ԸՆԴՈՒՆԱԾ ՑԱՆԿԱՑԱԾ ՈՒՏԵԼԻՔ ԿԱՄ ՀԵՂՈՒԿ ԱՆՁԳԱՅԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՐՈՂ Է ԵՐԵԽԱՅԻ ԿՅԱՆՔԻՆ ՎՏԱՆԳ ՍՊԱՌՆԱՑՈՂ ԻՐԱՎԻՃԱԿ ՍՏԵՂԾԵԼ:

ԿԱՐԵՎՈՐ Է

- ներկայանալ հիվանդանոց նշանակված ժամին,
- վիրահատության կամ դրա նախորդ օրը որևէ խնդրի դեպքում (ջերմություն, փխում, ցան, ինքնազգացողության վատացում) անպայման տեղեկացնել ընդունող բուժանձնակազմին,

Նախավիրահատական նշված կանոնների խախտումը (հատկապես՝ երեխային սնունդ տալը, նշանակված ժամից ուշանալը) կարող է վիրահատության չեղարկման կամ հետաձգման պատճառ դառնալ:

ՀԻՎԱՆԴԱՍԵՆՅԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

Հիվանդանոցային բուժման ընթացքում կարող եք ընտրել հիվանդասենյակի տեսակը:

Ընդհանուր հիվանդասենյակ - առկա մինչև 4 մահճակալ

Տրամադրվում են բուժառուի անկողնային պարագաներ, հիվանդանոցային շապիկ:

Բուժառուի հետ կարող է մնալ մեկ խնամակալ, ում հանգստի համար նախատեսված է բազմոց:

Հիվանդանոցում գործում են տեսակցության հստակ ժամեր՝ ժ. 17:00-20:00, որի ընթացքում թույլատրվում է մեկ տեսակցողի այց:

Ընդհանուր հիվանդասենյակը տրամադրվում է անվճար:

Անհատական հիվանդասենյակ

Տրամադրվում են բուժառուի անկողնային պարագաներ, հիվանդանոցային շապիկ, երեքանգամյա սնունդ և խնամքի փաթեթ ծնողի համար (անկողնային սպիտակեղեն, հողաթափ, սրբիչ, ատամի խոզանակ և մածուկ):

Բուժառուի հետ կարող է մնալ մեկ խնամակալ, ում հանգստի համար նախատեսված է բազմոց, 2-րդ խնամակալը ժ. 12:00-20:00 կարող է լինել հիվանդասենյակում:

Հիվանդանոցում տեսակցության ժամերին՝ ժ.17:00-20:00, թույլատրվում է մեկ տեսակցող:

Հիվանդասենյակի արժեքն է 25,000 ՀՀ դրամ յուրաքանչյուր հիվանդանոցային օրվա համար:

Ընտանեկան հիվանդասենյակ

Տրամադրվում են բուժառուի անկողնային պարագաներ, հիվանդանոցային շապիկ, երեքանգամյա սնունդ, խնամքի փաթեթ ծնողի համար, հանգստի համար մահճակալ կամ բազմոց, հիվանդասենյակում 24ժամ կարող են գտնվել երկու խնամակալ:

Հիվանդանոցում գործում են տեսակցության հստակ ժամեր՝ ժ. 17:00-20:00, որի ընթացքում թույլատրվում է օրը երկու տեսակցողի այց:

Ընտանեկան հիվանդասենյակի արժեքն է 55,000 ՀՀ դրամ յուրաքանչյուր հիվանդանոցային օրվա համար:

Եթե վիրահատությունը վճարովի հիմունքներով է, ապա բուժառուին տրամադրվում է անհատական հիվանդասենյակ: